«ՀԱՍԿԵՐ» ամսագրի ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

№ 7.

Յ. ԲԵՕՍԵԱՆ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ

ՔԵԹԻՆ

Պիէս երկու արարուածով

ԹԻՖԼԻՍ
Էլէկտրատպ. Օր. Ն. Աղանեանի, Պօլից. 7
1913

891.99
Բ-65

13 APR 2011
891.99
Ք-65

«ՀԱՍԿԵՐ» ամսագրի ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

№ 7.

Յ. ՔԵՕՍԵԱՆ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ

Ք Ե Ռ Ի Ն

Պիէս երկու արարուածով

1001
4622
ТИФЛИСЪ

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Էլէքտրատպ. օր. Ն. Աղանեանի, պօլից. 7
1912

30 JUL 2013
13 APR 2011
60623

ՔԵՌԻՆ

Պիէս երկու արարուածով

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՔ

Մարթա — լուսարարուհի
Հրաչիկ — Մարթայի որդին, 8 տարեկան.
Գ. Սիրունեան — կանտորայի ծառայող.
Տիկին Պայծառ — սրա կինը.
Աղաւնի — 12 տարեկան } Սիրունեանի երեխաները
Ազատ — 10 տարեկան }
Տիգրան — 8 տարեկան }
Սանդուխտ — 6 տարեկան }
Խէչօ — 15 տարեկան ծառայ.
Սուրէն — Հրաչիկի ընկերը.

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Լուսարար Մարթայի սենեակը ներքնայարկում։ Դիմացը դուռ, որի մօտ ձախ կողմից՝ մի փայտէ տաբուրէտի վրա լուացքի տաշտ և լուացքի ուրիշ պարագաներ։ Ձախ պատի մէջ լուսամուտ, որի տակը մի հին սեղան՝ լրագրով ծածկուած, վրան թանաքի սրւակ, տետրակներ։ Սեղանի մօտ՝ սնդուկ։ Դռան մօտ աջ կողմից թիթեղէ (ժեստ) վառարան, իսկ աջ պատի մօտ՝ տախտ։

Մարթան տախտի վրա պառկած է՝ հին վերմակով փաթաթուած։ Սենեակում մի ծայրից մինչև միւսը կապուած է լացքի պարան։

ՏԵՍԱՐԱՆ I

ՀՐԱՉԻԿ եւ ՄԱՐԹԱ

ՀՐԱՉԻԿ (*ներս վազելով՝ զրքերով տոպրակը ձգում է սեղանի վրա*)—*Ուֆ, այսպէս էլ ցուրտ։ Հազիւ տուն հասայ. ամբողջ մարմինս սառել է։*

ՄԱՐԹԱ. (*գլուխը բարձրացնելով*) *Հրաչիկ, դու ես։*

ՀՐԱՉԻԿ. *Այո, մայրիկ։ Այնպէս ցուրտ է դուրսը, այնպէս ցուրտ. վարժապետն ասաւ՝ որ եթէ վազելով գնամ՝ չեմ մրսի։ Ուզում էի վազեմ, բայց քիչ մնաց հատ կօշիկս ոտքիցս վայր ընկնէր, միւսն էլ հօ ծակ է։ Դու ի՞նչպէս ես, մայրիկ։ Այսօր այնպէս ուրախ եմ։*

ՄԱՐԹԱ. *Ի՞նչ կայ որ...*

ՀՐԱՉԻԿ. *Ապա իմացիր...*

ՄԱՐԹԱ. *Այսօր ձեզ արձակել են. Նոր Տարին մօտ է, Ծնունդն է գալիս։*

ՀՐԱՉԻԿ. *Ո՛չ, ո՛չ։*

ՄԱՐԹԱ. *Երևի կարծում ես որ իմ խոստացած նոր կօշիկներն ու տաք ձեռնոցները կըստանաս։*

ՀՐԱՉԻԿ. *Ո՛չ, ո՛չ. գիտեմ, փող չունես։ Չէ՞ որ դու քանի ժամանակ է հիւանդ պառկած ես...*

ՄԱՐԹԱ. (*ախ քաշելով*) *Ապա ի՞նչ, որդի ջան...*

ՀՐԱՉԻԿ. *Երկու շաբաթ քեզ հետ կըլինեմ, քեզնից չեմ հեռանայ, ահա թէ ի՞նչ։ Չեմ թողնի որ տեղից վեր կենաս, կողքիդ կը նստեմ, վերմակդ կուղղեմ, վառարանը շուտ շուտ կը վառեմ, տաք տաք կերակուր կուտեցնեմ, լաւ լաւ երգեր կերգեմ, էլ չես տխրի* (*փաթաթւում է մօրը*)։

ՄԱՐԹԱ. (*վեր նայելով*) *Աստուած, սրան խնայիր գոնէ... թող որ ապրեմ սրա համար։*

ՀՐԱՉԻԿ. *Մայրիկ, պէտք է անպատճառ բժիշկ բերեմ. թող դեղ տայ... Դեղատունն էլ հեռու չէ...* (*Մարթան ծանր հոգոց է հանում*)։ *Ախ, մայրիկ ջան, ի՞նչքան խնդրեցի, որ քեզ լաւ պահես։ Այն օրը որ լացքի գնացած չը լինէիր, հիմա բոլորովին առողջ կը լինէիր։*

ՄԱՐԹԱ. *Իսկ մեզ ո՞վ պահի...*

ՀՐԱՉԻԿ. *Հայրիկը որ կենդանի լինէր, չէր թողնի որ տնէտուն ման գաս, ողջ օրը կռացած սապնես, ճմռես, քամես, ու քրտնած այս ցրտին դուրս գաս, լացքը փռես։* (*Սուրէնը ներս է վազում*)։

ՏԵՍԱՐԱՆ II

ՆՈՑՆԵՐ եւ ՍՈՒՐԷՆ

ՍՈՒՐԷՆ. *Հրաչիկ, Հրաչիկ... Տես, հայրիկս ի՞նչ գնդակ է առել ինձ համար։*

ՀՐԱՉԻԿ. *Ի՞նչ մեծն է...*

ՍՈՒՐԷՆ. *Եկ, գնանք մեր պատշգամբը խաղանք։*

ՀՐԱՉԻԿ. Չեմ կարող, մայրիկս հիւանդ է։

ՍՈՒՐԷՆ. Դէ, արի, Հրաչիկ։ Շատ չենք խաղայ, մի կէս ժամ։

ՀՐԱՉԻԿ. Չէ, չեմ կարող։ Դեռ ճաշել էլ չենք։

ՍՈՒՐԷՆ. Լաւ, ճաշիր ու եկ։ Միասին կը-խաղանք։ Կը սպասեմ (դուրս է վազում, գնդակը զետնին խփելով)։

ՏԵՍԱՐԱՆ III.

ՄԱՐԹԱ եւ ՀՐԱՉԻԿ

ՀՐԱՉԻԿ. (պատուհանից նայելով) Ի՜նչ երկար կօշիկներ ունի։ Ձիւնի մէջ խրւելով վազվզում է և էլի ձիւնը ներս չի լցւում։

ՄԱՐԹԱ. Ախ, ի՜նչու պէտք է ես էսօրին լինէի... (ծածուկ արտասուքն է սրբում)։

ՀՐԱՉԻԿ. Ես էլ որ մեծանամ, ինձ համար այդպիսի երկար կօշիկներ կառնեմ։ (Պաուզա)։

ՄԱՐԹԱ. Հրաչիկ ջան, տես էստեղ սնդուկում հաց մնացել է։ Վեր ա՛ռ կեր։ Քաղցած կը-լինես։

ՀՐԱՉԻԿ. (սնդուկը բաց է անում) Կէս հաց կայ, միասին կուտենք։

ՄԱՐԹԱ. Չէ, որդի ջան, ախորժակ չունեմ։ Աչքերս մթնում է, գլուխս պտոյտ է գալիս, էլի այս անիրաւ ջերմն ու տենդը սկսեց (լաւ փաթաթւում է)։

ՀՐԱՉԻԿ. (ուղղելով վերմակը) Լաւ ծածկուիր, չը մրսես։

ՄԱՐԹԱ. Հացը կեր։

ՀՐԱՉԻԿ. Մի քիչ կը սպասեմ, դուցէ ախորժակդ բացւի, միասին կուտենք։ Մայրիկ, այսօր փողոցներում ի՜նչքան բան էին ծախում։ Բոլոր խանութների պատուհանները այնպէս զարդարւած են։ Այ, եթէ առողջ լինէիր, անցեալ տարւայ պէս ման կը դայինք, մտիկ կը տայինք։ Ամբողջ քաղաքը ոտքի վրա է։ Փողոցներում սեղանների վրա էլ կանֆետ, էլ նուշ, էլ չամիչ, խնձոր...

ՄԱՐԹԱ. Հայրդ պիտի կենդանի լինէր, այ որդի... (փաթաթւում է)։

ՀՐԱՉԻԿ. (դանդաղ) Շուտով Մեռելոց է. մենք գերեզմանատուն կերթանք, հայրիկի գերեզմանը կօրհնենք։

ՏԵՍԱՐԱՆ IV

ՆՈՑՆԵՐ եւ ԽԷՉՕ

ԽԷՉՕ. Մարթան տանն է։

ՀՐԱՉ. Տանն է, նոր քնեց։

ԽԷՉՕ. Քնեց։ Էս ժամին քնել։

ՀՐԱՉ. Հիւանդ է, դողցնում է...

ՄԱՐԹԱ. (վերմակի տակից գլուխը հանելով) Խէչօ, ի՜նչ կայ։

ԽԷՉՕ. Խանումը էս մի սփռոցն է ուղարկել, պէտք է էս գիշերն ութ լանաս, որ մինչև առաւօտ չորանայ, ութօ անես, ուղարկես։

ՀՐԱՉ. Մայրիկս չի կարող. չէ՞ տեսնում՝ պառկած է։

ԽԷՉՕ. Խանում հօ չէ՞ որ... Թող վեր կենայ, ձեռաց լանայ։

ՀՐԱՉ. Այս մէկ անգամ էլ ինչ կը լինի որ խանումը ինքը լանայ։

ԽԷՉՕ. Էս տօն օրին կանգնում լացք է անում... Բաս էլ ինչ խանում է... Ոչ կը կարեն, ոչ կեփեն, ոչ էլ կը լանան։ Պատրաստի կուտեն կը խմեն։ Կարը դերձակն է անում, կերակուրը խոհարարն է եփում, լացքը լացարարն է անում, սենեակները ծառան է մաքրում...

ՀՐԱՉԻԿ. Իսկ եթէ դերձակն էլ, խոհարարն էլ, լացարարն էլ, ծառան էլ հիւանդանան, այն ժամանակ ինչ պիտի անեն։

ԽԷՉՕ. (զառնացած) Ուրիշներ շատ... մէկի տեղ հազարը լուս կընկնեն։ (Մարթային) Բաս խանումին ինչ ասեմ։ Մէկ ուրիշի մօտ որ գընամ, էլ իսկի քեզ մօտ չի ուզարկի։

ՄԱՐԹԱ. Ախ, տեսնում ես՝ ինչ օրի եմ։ Մի կէս ժամից արի. ով գիտի Աստուած մեզ ողորմայ, մի քիչ ուժի գամ, էն է կը լանամ։

ՀՐԱՉԻԿ. Մայրիկ ջան, ինչ ես ասում. ինչպէս կարող ես լանալ։

ՄԱՐԹԱ. Իսկ որ ուրիշին տան։

ԽԷՉՕ. (կարեկցաբար) Մարթա մայրիկ, լաւ է, ահա էստեղ վէր կը դնեմ, ով գիտի՝ կարողանաս։ Մի կէս ժամից կը գամ։ Կը դողցնի, կանցնի։ Ասում եմ՝ էլ ուրիշի մօտ չը գնամ (դուրս է գնում)։

ՏԵՍԱՐԱՆ V.

ՄԱՐԹԱ եւ ՀՐԱՉԻԿ

ՀՐԱՉ. Ախ, մայրիկ, ինչու յանձն առար... Փայտ էլ չը կայ որ վառարանը վառենք, ջուրը տաքացնենք։

ՄԱՐԹԱ. Որդի, տոպրակը առ, վազիր, կիրակոս աղի նոր շինութիւնից փայտի կտորտանք, տաշեղ հաւաքիր, ձեռաց բեր։

ՀՐԱՉ. Երէկ աղէն տեսաւ, բարկացաւ, լցրած տոպրակս ետ թափ տալ տւաւ ու վարպետ Օհանի վրա էլ մէկ այնպէս կանչեց... «Չը համարձակւեսս», ասաւ ինձ, «էլ էստեղ երևալ, հոգիդ կը հանեմ...»

ՄԱՐԹԱ. (յուսահատուած) Տէր Աստուած, Տէր Աստուած, ինչ կը լինի մէկ քաղցր աչքով մեզ ցած նայես... Էս անմեղ գառնուկին էլ է ողորմաս...

ՍՈՒՐԷՆ. (բեմի ետեւից, պատուհանը բաղխելով) Հրաչիկ, Հրաչիկ, չը պրծա՞ր ճաշդ։

ՀՐԱՉ. Ճաշ...

ՍՈՒՐԷՆ. (նոյնպէս) Միհրանը մեզ մօտ է... Սահնակ ենք շինել...

ՀՐԱՉԻԿ. (մօտենալով պատուհանին) Դուք ձեռնոցներ ունիք, վերարկուներդ տաք...

ՍՈՒՐԷՆ. Արի, մի վախի, բոլորովին ցուրտ չէ։ Վազվզելիս կը տաքանաս։

ՀՐԱՉԻԿ. Մայրիկս մենակ կը մնայ։ Ես դեռ չեմ ճաշել։

ՍՈՒՐԷՆ. Է՛ Է, դէ լա՛։ Ճաշդ վերջացրու, էկ։ Թէ չէ շուտով կը մթնի, մայրիկս տուն կը կանչի (հեռանում է պատուհանի ետեւից)։

ՄԱՐԹԱ. Հրաչիկ ջան, հացը հանիր, կեր։ Դողս սաստկանում է։ Մի շոր բան կը լինի, վրաս գցի։ Ո՛ւ... ո՛ւ... ո՛ւ... (դողում է)։

ՀՐԱՉԻԿ. Իմ վերմակը ծածկեմ։ (Առնում է անկիւնից իր վերմակը, ծածկում մօր վրա եւ ուղղում)։

ՄԱՐԹԱ. (վերմակի տակից) Հացը կեր, լինա՛ մի սպասի։

ՀՐԱՉԻԿ. (կամացուկ, տխուր մօտենում է անդուկին, բաց է անում, մի կտոր հաց է կըտրում). Այս էլ կուտենք, այս մի կէս հացն էլ... Իսկ էգուց... իսկ միւս օրը... էլ ես գցած մի կոպէկ չը կայ։ (Գլուխը դնում է բաց արած սընդուկի խուփին եւ մտածում)։ Մենակ ենք, մենակ... Վախենում եմ... Հայրիկս էլ այսպէս հիւանդ էր... (մտածում է) Հացը կըպրծնի... Փայտ չըկայ... (դրսից լսւում է Սուրէնի ու Մինրանի ծիծաղը)։ Ի՞նչպէս ծիծաղում են... Հայր էլ ունեն, տունը տաք, վերարկուները հաստ, կրկնակօշիկները նոր, փորը կուշտ... Ի՞նչու մենք այսպէս պիտի լինենք... Ո՞ւմ մօտ գնամ... Գոնէ քեռին այստեղ լինէր, գոնէ նա գիւղից գար... Նամակ գրեմ նրան։ Թող գայ, թող մի ճար անի... Մայրիկս ասում է՝ նա շատ է իրան սիրում (նստում է սեղանի առջեւ)։ Ի՞նչ ցուրտ է։ (Մի կտոր թուղթ պոկելով տետրակից) Կը գրեմ... (Սկսում է գրել, երբեմն մի մի բառ բարձր կրկնելով)... «Դողցնում է... չը կայ... վերջացել է... ծակ են... առողջանում... սպասում ենք...» Վերջացրի. հիմա անունս գրեմ։ «Հրաչեայ»։ Մեր տան հասցէն էլ չը մոռանամ։ Անցեալ տարի ուրիշ տեղ էինք ապրում։ Վարձը չը կարողացանք վճարել, դուրս արին (ծալում է)։ Քեռու հասցէն էլ գրեմ... Իսկ մարկան որտեղից գտնեմ (մտածում է։ Մթնում է հետզհետէ)։ Վարժապետն ասում էր թէ նամակները առանց մարկայի էլ գնում են. ստացողն է վճարում։ Քեռին չի բարկանայ (ներս է մտնում Խէչօն)։

ՏԵՍԱՐԱՆ VI.

ՆՈՑՆԵՐ եւ ԽԷՉՕ

ԽԷՉՕ. (բարձր ձայնով) Էս ի՞նչ մութ է ձեր սանդուխտը...

ՀՐԱՉԻԿ. Կամաց։ Մայրիկս քնած է։

ԽԷՉՕ. (ցածրացնելով ձայնը) Էլի քնած է։

ՀՐԱՉԻԿ. (նոյնպէս) Հէնց հիմա է սաստիկ դողցնում։

ԽԷՉՕ. Հիմա ես ի՞նչ անեմ։ Սփոռցն ուր տանեմ։

ՀՐԱՉԻԿ. Խէչօ ջան, իմ բարի Խէչօ ջան, դու էլ մայր ունես, դու էլ զարիր ես. մի կերպ հօլա գնայ, էլ ուրիշին մի դիմի։ Մայրիկս կառողջանայ, լաւութիւնդ չի մոռանայ։

ԽԷՉՕ. Ախ, գիտեմ, տեսնում եմ ինչ կըրակի մէջն էք, է։

ՀՐԱՉԻԿ. Դու գիտես, ախպէր եղիր...

ԽԷՉՕ. Սփռոցը որտեղ է։ Էս մթնում ինչպէս էք նստած։

ՀՐԱՉԻԿ. Նաւթներս հատել է։ (Տալիս է լապտերը)։

ԽԷՉՕ. Բեր տանեմ (ուզում է գնալ)։

ՀՐԱՉԻԿ. Խէչօ ջան, Աստուած սիրես, էս ցրտում էլ տանից դուրս չը գնամ, Մայրիկիս մենակ չը թողնեմ... քո մօրդ սիրուն, այս նամակը ճամփին փոստի արկղը գցիր։

ԽԷՉՕ. (մասամբ նեղացած) Տուր, լաւ (դուրս է գնում)։

ՏԵՍԱՐԱՆ VII

ՄԱՐԹԱ եւ ՀՐԱՉԻԿ

ՀՐԱՉԻԿ. Ղորթ էլ՝ ինչ մութ է... Բացից ոչ Սուրէնի, ոչ էլ Միհրանի ձայնն է լսւում։ (Քամու ձայն) Քամի է վեր կացել։ Պատուհանի ապակիները դողդողում են։ Ախ, մի բաժակ տաք թէյ... (մթնում հացը որոնում է սեղանի վրա) Մայրիկիս կողքին նստեմ... գուցէ քուն ուգի (կծկւում է տախտի ծայրին, մօր ոտների մօտ)։ Վերմակս որ լինէր, մի լաւ կը փաթաթուէի... (հացը ծամելով)։ Քեռին նամակս կը ստանայ... Անպատճառ կը գայ, անպատճառ... Ինչ տաք կը լինի մեր սենեակը, ինչ ուրախ կը լինի մայրիկս (վարագոյրը դանդաղ իջնում է)։

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Պատկեր Ա.

Միջակ կարողութեան տէր ընտանիքի սենեակ։ Դիմացը դուռ, աջ կողմը դուռ և պատուհան, ձախ կողմը դուռ՝ դէպի մանուկների ննջարանը։ Սովորական կահկարասիք։ Լամպը վառւում է։ Աղաւնին նստած կարդում է։

ՏԵՍԱՐԱՆ I

Տիկ. ՊԱՅԾԱՌ եւ ԱՂԱՒՆԻ

ՊԱՅԾԱՌ. (բարկացած ներս մտնելով ձախ դռնից, լապտերը ձեռքին) Խէչօն վերջի վերջոյ հոգիս հանելու է։ Տեսել էի որ տանի՝ լուացարարին շտապով լուանալ տայ այս սփռոցը, ետ է բերել. ասում է՝ Մարթան հիւանդ է։ Այս ժամին ես հիմա ում ուղարկեմ։

ԱՂԱՒՆԻ. Ապա վաղը սեղանի վրա ինչ փըռենք մեր տօնածառին։

ՊԱՅԾԱՌ. Չը գիտեմ։ Սպասիր՝ խոհարարուհուն տամ, թող նա լուանայ (կապոցը տանելիս՝ միջից մի նամակ է վայր ընկնում։ Դուրս է գնում աջ դռնով)։

ԱՂԱՒՆԻ. Մարթան էլ ժամանակ է գտել հիւանդանալու։ (Մանկանոցից ներս են վազում Ազատը, Տիգրանն ու Սանդուխտը)։

ՏԵՍԱՐԱՆ II

ԱՂԱՒՆԻ, ԱԶԱՏ, ՏԻԳՐԱՆ եւ ՍԱՆԴՈՒԽՏ

ԱԶԱՏ. (կամենալով ընել Տիգրանին, որ նրա թղթէ սաղաւարտն է հագել). Տո՛ւր ասում եմ քեզ. կը փչացնես։

ՏԻԳՐԱՆ. Չէ, թող մի քիչ էլ ես հագնեմ։ Չեմ տայ (կռւում են)։

ԱՂԱՒՆԻ. Դուք միշտ պիտի կռւէք (աշխատում է նրանց բաժանել)։

ԱԶԱՏ. Թող իմ սաղաւարտը տայ։ Թէ չէ կերթամ նրա թմբուկը կը վերցնեմ (ուզում է գնալ)։

ՏԻԳՐԱՆ. Ահա՛ վերցրու, վերցրու՛ քո սաղաւարտը։ Խօ չը կերա՛յ։

ՍԱՆԴՈՒԽՏ. (յատակից նամակը բարձրացնելով) Այ, ես էլ սրանից ինձ համար գլխարկ կը շինեմ։

ԱՂԱՒՆԻ. Այդ ի՞նչ թուղթ է. հայրիկինը չը լինի (խլում է ու սկսում է կարդալ։ Ներս են մտնում ղիմացի ղռնով Սիրունեանը եւ տ. Պայծառը)։

ՏԵՍԱՐԱՆ III

ՆՈՑՆԵՐ եւ տ. ու պ. ՍԻՐՈՒՆԵԱՆՆԵՐ

ՊԱՑԾԱՌ. Այ մարդ, երբ էի գործի ուղարկել Խէչօին, պատասխանը հիմա է բերում։ Սատիր է. ոչոքից երկիւղ չունի։

ՍԻՐՈՒՆԵԱՆ. Սպասիր, այս ցրտից մի ուշքի գամ։ Այսօր մեր կանտորայի երեկոյեան պարապմունքը ուշ վերջացաւ։

ԱՂԱՒՆԻ. Հայրիկ, այս քո՞ թուղթը հօ չէ։

ՍԻՐՈՒՆ. Տուր տեսնեմ։ (Կարդում է) «Իմ քեռի Յակոբին Կորիզոտ գիւղը»։ Այս նամակը այստեղ ի՞նչ է անում (արագ աչքի է անցնում)։

ՍԱՆԴՈՒԽՏ. Ես գտայ, այ այստեղ։

ՍԻՐՈՒՆ. Աղաւնի, առ կարդա։

ԱԶԱՏ. Ո՞ւմ գրածն է։ Այդ ի՞նչ խոշոր և ծուռումուռ տառերով է գրուած։

ԱՂԱՒՆԻ. «Իմ քեռի Յակոբին, Կորիզոտ գիւղը։ Իմ անգին քեռի։ Մայրիկը երկու շաբաթ հիւանդ է. դողցնում է։ Տանը մի կաւոր հաց չը կայ. փայտը վերջացել է, շատ ցուրտ է. մաշիկներս էլ ծակ են։ Շոր չունեմ... (յուզուած)։

ՏԻԳՐԱՆ. Որ փայտ չունեն, բա ինչով են վառում վառարանը։

ԱԶԱՏ. Մաշիկներն էլ ծակ. խեղճ տղայ։

ՍԱՆԴՈՒԽՏ. Մայրիկն էլ հիւանդ. ով պիտի գլուխը սանրի։

ԱՂԱՒՆԻ. «Էլ չեն թողնում, որ շինութիւններից տաշեղ հաւաքեմ։ Մայրիկը չի առողջանում։ Բարի քեռի, հաց բեր մեզ, փայտ բեր։ Մայրիկս դեղի փող չունի»։

ՏԻԳՐԱՆ. Թող հայրիկը գնի։

ՊԱՑԾԱՌ. Մի խանգարի, Տիգրան. ի՞նչ անհամբերն ես։

ԱՂԱՒՆԻ. «Քեռի ջան, դու գիտես, որ ես հայր չունեմ, որը եմ, մենակ ենք։ Շուտով Նոր

Տարին կը գայ, ուրիշ տղայք լաւ-լաւ բաներ ունեն։ Շուտով արի՛, մայրիկս մեղք է։ Հաց բե՛ր, փայտ բեր, դեղ բեր։ Ցուրտ է։ Աչքներս ջուր կտրած սպասում ենք։ Աջդ համբուրում եմ։ Քո Հրաչեայ»։ (*Բոլորը լուռ մնում են*)։

ԱԶԱՏ. Ո՞վ պիտի լինի (*մտածմունքի մէջ է*)։

ՏԻԳՐԱՆ. Կանչենք՝ թող գայ մեզ մօտ ապրի։

ՍԱՆԴՈՒԽՏ. Ես իմ կողքին կը նստեցնեմ ճաշին։

ՍԻՐՈՒՆ. Այստեղ հացէն էլ կայ։

ՏԻԳՐԱՆ. Հիմա ամեն տեղ ուրախանում են, իսկ նա հաց չունի ուտելու...

ՍԱՆԴՈՒԽՏ. Ես իմ կանֆէտները նրան կը տամ. չէ՞ որ նա հայր չունի։ Ո՞վ պիտի նրա համար առնի։ Նա տօնածառ էլ չունի։ (*Հայրիկն ու մայրիկը լուռ դիտում են*)։

ԱԶԱՏ. (*մտածմունքից դուրս գալով անվըստահ*) Հայրիկ, թո՛յլ կը տաս, որ իմ փոքր վերարկուն և շարֆը այդ երեխային տամ։

ՏԻԳՐԱՆ. (*ծափ տալով*) Իսկ ես իմ կօշիկները ու ձեռնոցները կը տամ։

ՍԱՆԴՈՒԽՏ. Ես իմ կանֆէտները փոքրիկ Հրաչեային կը տամ։ Հայրիկը ինձ համար ուրիշ կանֆէտ կառնի. հա՞։ Ես իմ փոքրիկ տօնածառն էլ նրան կը տամ։

ԱՂԱՒՆԻ. (*շտապելով*) Պէտք է այսօր և եթ տալ։ Մայրիկ, ես էլ իմ մօրաքրոջ ընծայած շալը կը տամ։ Դու չե՞ս բարկանայ, չե՞ս բարկանայ, չէ՞։ Հիմ իսկ և եթ տանենք, հիմ իսկ և եթ։

ԲՈԼՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԸ. Այս րոպէիս, հիմա՛, հիմա՛։

ՍԻՐՈՒՆ. Բայց ի՞նչպէս տանենք։

ՊԱՅԾԱՌ. Ցուրտ չէ՞։

ՍԱՆԴՈՒԽՏ. Ես առջևից տօնածառը կը տանեմ։

ԱԶԱՏ. Ես էլ իմ սաղաւարտս կը հագնեմ։

ՏԻԳՐԱՆ. Ես էլ իմ թմբուկս։

ԱՂԱՒՆԻ. Սպասեցէք, սպասեցէք ես մի բան հնարեցի։ (*Խէչօն ձախ դռնից ներս է մտնում ինքնաեռը ձեռին*)։

1001
4629

ՏԵՍԱՐԱՆ IV

ՆՈՅՆԵՐ ԵՒ ԽԷՉՕ

ՍԻՐՈՒՆ. Բայց այս նամակը ի՞նչպէս ընկաւ այստեղ, մեր տուն։

ԽԷՉՕ. (*կանգնելով*) Ապա, ո՞ր նամակը։ Վա, էստեղ ո՞նց ընկաւ։ Մի ժամ է պտրում եմ, չեմ գտնում։

ԲՈԼՈՐԸ. Նամա՞կը։

ԽԷՉՕ. Հա՛, Մարթայի տղի նամակը։

ԲՈԼՈՐԸ. Մարթայի տղի՞։ (*Զարմանք*)։

Վարագոյր

ՀԱՆՐԱՅԻՆ ... ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Б...
7/XI· 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Պատկեր Բ.

Նոյն սենեակը, ինչ որ առաջին արարածի մէջ։ Մութ է։ Մարթան փաթաթուած քնած է։ Հրաչիկը կծկուկ, նոյնպէս քնել է։ Միառժամանակ բեմը դատարկ է։

ՏԵՍԱՐԱՆ I

ԽԷՉՕ, ապա ԱՂԱՒՆԻ, ԱՋԱՏ, ՏԻԳՐԱՆ, ՍԱՆԴՈՒԽՏ, բոլորն էլ (ծառան էլ) շորերը փոխած, երեսներին դիմակներ, մօրուքներ, բեխեր։

ԽԷՉՕ. դուռը կամացուկ բանալով ու ներս սողալով, զգոյշ բաց է անում վառարանի դուռը, բերած փայտը մէջը դնում, կրակը վառում ու նորից կամացուկ դուրս գնում։ Ցանկարծ բացւում են դռների երկու փեղկերը, ու ներս են մտնում—Խէչօն վառած տօնածառը ձեռքին, նրա փէշից բռնած Սանդուխտը, ապա գալիս են իրար հետից միւսները։ Խէչօն դնում է տօնածառը սենեակի մէջտեղ։ Հրաչիկը աչքերը բաց է անում, զարմացած նայում, բայց տեղից չի շարժւում։

ԵՐԵԽԱՆԵՐԸ. (*պար բռնելով*)
Ահա եկաւ Նոր Տարի,
Հետը բերեց նոր բարի,
Մանր տղոց ուրախ օր,
*Բարի զաւակ հօրն ու մօր. ևն *)։*

(Մարթան էլ զարթնում է, երեսը շուռ է տալիս դէպի տօնածառը, արմունկի վրա կրթնում ու լուռ, աչքերը

**) Այստեղ կարող են երգել և այլ մէկ կամ մի քանի երգեր։ Տես Ազատ Մանուկեանի «Փնջիկ» և ուրիշների երգարանները։*

չռած նայում։ Երգի ժամանակ Խէչօն դուրս է գնում և մի կապոց է բերում, դնում դռան մօտ։ Ամեն անդամ, երբ դուռը բացւում է, խորքում երևում են տ. և պ. Միրունեանները։

ՀՐԱՉԻԿ (*աչքերը տրորելով կամաց ինչնում է տախտից*) *Ո՞վ էք դուք։*

ԲՈԼՈՐԸ (*պարելով*).
Հօյ, Նազան եմ, Նազան եմ,
Ջան Նազան եմ, Նազան եմ։
Նազան, դու բարով եկար. ևն).*

(Խէչօն էլ ծամածռութիւններ է անում։ Ցանկարծ բոլորն էլ դուրս են վազում, թողնելով վառած տօնածառը։ Հրաչիկը զարմացած դանդաղ պտտւում է ծառի շուրջը)։

ՏԵՍԱՐԱՆ II

ՄԱՐԹԱ եւ ՀՐԱՉԻԿ

ՀՐԱՉԻԿ. *Երազ է, երազ։ Մայրիկ, երազ է...*

ՄԱՐԹԱ. *Հրաչիկ, դո՞ւ ես։*

ՀՐԱՉԻԿ. *Մայրիկ (փաթաթւում է մօրը, աչքը ծառից չընհեռացնելով։ Պաուզա)։ Դո՞ւ էլ տեսնում ես, այն, այն...*

ՄԱՐԹԱ. *Վառւում է։*

ՀՐԱՉԻԿ. *Այո՛ (Պաուզա։ Կամացուկ մօտենում է ծառին եւ ձեռքը երկչոտութեամբ պարզում մոմին եւ ետ տանում)։ Այրում է։ Տես, տես, վերև հրեշտակ է։*

ՄԱՐԹԱ. Իջել է երկնքից։

ՀՐԱՉ. Ի՜նչքան խաղալիքներ են։ (Աչքերը մատներով ծածկում է)։ Ի՜նչ քաղցր երազ է (զգուշութեամբ քաց է անում)։ Այս ի՞նչ է, վերջապէս, մայրիկ։

ՄԱՐԹԱ. Ես էլ չըգիտեմ։ (Ցեղից վեր է կենում)։ Վառարանը դռա՛ վարեցիր։

ՀՐԱՉԻԿ. Ո՛չ։

ՄԱՐԹԱ. Ապա ո՞վ։ Ի՜նչ տաք է։ Այս էլ կապոց։ (Բաց է անում, իսկ Հրաչիկը շարունակ շրջում է ծառի շուրջը եւ ամեն մի կախած իր զարմացած դիտում)։ Շա՛լ։ (Ձգում է ուսին)։ Ի՜նչպէս յարմար է։ Այս էլ վերարկու։ Հրաչիկ, վերարկո՛։

ՀՐԱՉ. Վերարկո՛։ Բեր, հագնեմ (Հագնում է)։ Ի՜նչ տաք է։

ՄԱՐԹԱ. Թէյ, շաքար, շարֆ, թղթի մէջ մի ինչ որ բան... շապիկ, կօշիկ...

ՀՐԱՉ. Կօշի՛կ, տո՛ւր հագնեմ։ (Հագնում է շտապ)։ Հէնց ոտի՞ս է։

ՄԱՐԹԱ. Ահա հաց, ձեռնոցներ...

ՀՐԱՉ. Ձեռնոցնե՞ր... ձեռնոցնե՞ր։ Ես ձեռնոցներ ունեմ։ (Հագնում է ու զմայլուած վազվզում տոնածառի շուրջը ծափ տալով)։

ՄԱՐԹԱ. Ահա ի՞նչ որ տուփ։ Ի՜նչ է գրուած։

ՀՐԱՉ. (Կարդում է) «Մայրիկիդ համար դեղ, ամեն օր կը տաս առաւօտ իրիկուն»։

ՄԱՐԹԱ. Դե՛ղ, դե՛ղ։ Փառք Աստծու, կառողջանամ, էլի կաշխատեմ։ Այս էլ փող թղթի մէջ, երեք ռուբլի։

ՀՐԱՉ. (Հրճուանքով, զրօսնում է ծառի շուրջը)։ Ի՜նչ լաւ է, ի՜նչ լաւ է։ Իսկի այսպէս լաւ չի եղել։ (Ծիծաղում է, պարում, երգում)։

ՄԱՐԹԱ. Թղթի մէջ փաթաթած տապակած մի՞ս։

ՀՐԱՉ. Տո՛ւր, ուտե՛մ։ Սոված եմ։

ՄԱՐԹԱ. Կե՛ր։ (Երկուսն էլ, այնտեղ եւեթ նստում են յատակին եւ ագահութեամբ ուտում)։

ՀՐԱՉ. Ի՜նչ համով է։

ՄԱՐԹԱ. Համո՛վ է։ (Պառկում)։ Կշտացա՛ր։

ՀՐԱՉ. Մայրիկ, մի՞թէ ճշմարի՞տ է։ (Շօշափում է իր շորը, արագ արագ շօշափում է մօր երեսը, մի քանի անգամ նորից նայում է տոնածառին)։

ՄԱՐԹԱ. (ապշած) Բայց ո՞րտեղից է, ո՞րտեղից։

ՀՐԱՉ. (Կրկնում է անգիտակցաբար) Մի՞թէ ճշմարի՞տ է... Մի՞թէ ճշմարի՞տ է։ (Ձեռքը տանում է գրպանները, յանկարծ մի թուղթ հանում, կարդում է) «Քեռի Ցակոբից իր սիրելի Հրաչիկին»։ (Գրեթէ ճչալով) Մայրիկ, մայրիկ, այս բոլորը քեռի Ցակո՞բն է մեզ ուղարկել, քեռի Ցակո՞բը։ (Ընկնում է մօր գրկը։ Տեսարան)։

Վարագոյր

«ՀԱՍԿԵՐԻ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հեղ. Մելիք-Հայկազեան, Բան օր գետնի տակ 20 կ.
2. Օսկար Ուայլդ, Պրինցն ու ծիծեռնակը . . . 20 կ.
3. Ստ. Լիսիցեան. Քաջ ճամբորդները . . . . . 25 »
4. Ա.Թ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը . . . . 25 »
5. Ստ. Լիսիցեան. Քաջ զինուորներ, պիէս . . . 8 »
6. Ռ. Պատկանեան, Զախու . . . . . 20 »
7. Ստ. Լիսիցեան. Սոված գայլը . . . . . 10 »
8. Կլաւդիա Լուկաշևիչ. Քեռի Մկо . . . . . 20 »
9. Կարլ Էվալդ. Երկիրն ու դիտասաղը . . . . . 12 »
10. Կապուան. Ֆիօրէ փերին, Ասեղ. . . . . 12 »
11. Իւանովիչ. Աւօնց Ստեփանը. . . . . 20 »
12. Կ. Լուկաշևիչ. Ծաղիկների մէջ. . . . . 12 »
13. Ա.Թ. Խնկոյեան. Աղուէսն ու արջը. . . . . 20 »
14. Նիկ. Սարգսեան. Կենդանիների գոյները . . 15 »
15. Բրեհտ Հարտ. Մլիս. . . . . 12 »
16. Է. Սիտոն-Տոմպսոն Կախականջիկը. . . . . 12 »
17. Գ. Շեաք. Արագոնաւորդները. . . . . 25 »
18. Ա.Թ. Խնկոյեան. Գայլն ու շաղգամը . . . . 12 »
19. Կար. Միրիանեան. Մայրը . . . . . 12 »
20. Ցոլհ. Թուման. Քէֆ անողին քէֆ չի պակսիլ. 20 »
21. Գուշկին. Քնած գժխուհին . . . . . 20 »
22. Ն. Սարգսեան. Թէ ինչու համար է ծաղիկը 20 »
23. Նոյն. Թէ ինչպէս են տարածւում սերմերը . 20 »
24. Կարլ Էվալդ. Տատներկու քոյր. . . . . 10 «
25. Ֆէրրо. Տօնի համար . . . . . 10 »
26. Ա.Թ. Խնկոյեան. Փեսացու մուկը . . . . . .
27. Ա.Թ. Խնկոյեան. Աղուէսն ու Կռունկը. . . . . 10 »
28. Մամին-Սիբիրեակ. Ծեր ճնճղուկը, Ճիճու, Պառաւ Մուռանի խոստովանքը . . . . . 12 »
29. Վարդան Վարդանեան. Մասրդն ու Նամարդը 10 »
30. Ա.Թ. Խնկոյեան. Ծիտն ու Որբերը . . . . . 5 »
31. Էրնստ Սէտոն-Տոմպսոն. Կաղլիկ քոթոթը . . 20 »
32. Կ. Մ. Ստանիւկովիչ. Դայեակը . . . . . 20 »

ՀԱՄԱԿԵՐ ԱՄՍԱԳՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

1. Ստ. Լիսիցեան. Պահմբատցիկ . . . . . 5 կ.
   Ստ. Լիսիցեան. Ազատութիւն . . . . . 5 »
2. Սէյրի. Նոր վարժուհին . . . . . 5 »
3. Սէյրի, Ես խշխան եմ . . . . . 5 »
4. Ստ. Լիսիցեան. Գազանիք . . . . . 5 »
5. Ժորժիկ Մանուէլեան. Փնթի . . . . . 5 »
   Գ. Շահ-Պարոն. Գող—սիրտը գող . . . . 5 »
6. Տիկ. Մարգարիտ. Դասարանում . . . . . 5 »
7. Յ. Քեօսեան եւ Ստ. Լիսիցեան. Քեռին . . 5 »
8. Գլազունով. Տիկին Սիրան, փ. Կ. Միրիանեան 5 »
9. Ստ. Լիսիցեան. Քաջ զինուորներ. . . . . 8 »
10. Կ. Լուկաշեւիչ. Ծաղիկների մէջ . . . . . 12 »
11. Փէրրօ. Տօնի համար . . . . . 10 »

ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0371185

60623

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

Պահեստը՝ Թիֆլիս «ԳԻՐ» գրախանութում։